ԴՐՈՒԱԳՆԵՐ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ծ. Պ. ԱՂԱՏԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

1

Պատմության քառուղիներում շատ արյուն է հոսել, շատ ժողովուրդներ են կույ գնացել: Բայց այն, ինչ վիճակվել է հայ ժողովրդին, չի տեսել և ոչ մի ուրիշ ժողովուրդ: Նրա ապրած ողբերգությունը համաշխարհային պատմության բացառիկ էջերից է:

19-րդ դարի հատկապես վերջին քառորդին, երբ Օսմանյան կայսրության գահին բազմել էր արյունկզակ սուլթանը՝ Համիդ 2-րդը, հայերի դրությունը ավելի ողբերգական դարձավ: Հայ ժողովուրդը գիտակցում էր, որ իր փրկությունը սեփական պայքարի մեջ է, աև պայքարի, որի առաջամարտիկները պատրաստ կլինեն զոհաբերելու նույնիսկ իրենց կյանքը: Հայ ժողովրդի հայրենասեր զավակները պայքարի ելնելով, իրոք, արհամարհում էին մահը, զենքը ձեռքներին հաստատում ազգի լինելության իրավունքը: Մեր հերոս նախնիների ավանդական փառքը ժառանգած առաջամարտիկներն ազատության համար պայքարի դրոշ պարզելով՝ ուրիշ նպատակ չէին հետապնդում, քան վանել ժողովրդի գոյությանն սպառնացող արյունոտ սուրը, ապահովել նրա խաղաղ կյանքն ու ստեղծագործական աշխատանքը:

Ազատագրական պայքարի այդ քուրայում ծնված անձնուրաց հերոսներից էր քաջազուն Անդրանիկը: Զորավար Անդրանիկի կերպարը բարդ ու հակասական է, բայց և անչափ հերոսական ու վիպական: Ուսումնասիրելով այդ կերպարը, որի մեջ յուրահատուկ կերպով խտացել է հայ ժողովրդի պատմական ճակատագիրը, աչքիդ առաջ կանգնում է ինքը՝ ազատության կարոտ, անձնուրաց պայքարի պատրաստ մեր հերոսական ժողովուրդը: Անդրանիկն այդ մեծ պայքարի մարմնացումն է, ժողովրդի ցավերով մորմոքված ու խենթության աստիճանի հասնող հերոս զավակը. Նրա պայքարի նպատակն այն էր, որ հայ ժողովուրդը ազատ ապրելու իրավունք ունենար և վայելեր իր արդար քրտինքով վաստակած հացը: Հանուն դրա նա կռվել է ազնվորեն, անկաշառ, մաքուր սրտով ու զգացմունքներով: Եվ դա բազմապատկել է նրա ուժը: Նա առ ու սարսափի է մատնել իր ժողովրդի դահիճներին, բարեկամներին օգնելու համար պարզել է իր քաջ բազուկը՝ առանց ցեղի ու դավանանքի խտրության, առանց շահամոլության ու որևէ կեղծիքի: Անդրանիկն, անշուշտ, ունեցել է մոլորություններ, նա անկեղծորեն հավատացել է շահամոլ իմպերիալիստներին, բայց հետո, երբ ըմբռնել է այդ, անարգանքի խոսքեր է դրոշմել նրանց ճակատին և իր ժողովրդի հույսն ու ապագան կապել հեղափոխական Ռուսաստանի հետ:

Անդրանիկի հերոսական պայքարի դափնեպսակը հյուսվել է ամենանվիրական մասունքներից: Նա իր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսն է, հայկական Գարիբալդին՝ բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի հերոսների կատարյալ տիպարը, թուրքական բռնապետության անհաշտ թշնամին: Նա պայքարում էր արյունոտ սուլթանի քաղաքականության, բարբարոսական հալածանքների ու գազանությունների դեմ, բարձր էր գնահատում ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև թուրք և քուրդ ժողովուրդների ազատությունը, ու ցավով նկատում էր, որ այդ ժողովուրդների պայքարը չի միահյուսվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետ: Կրելով իր ժամանակի կնիքը և լինելով նրա հարազատ զավակը, նա թուրքիայի սնտեսական հետամնացության ու պրոլետարիատի, որպես կազմակերպված ուժի, բացակայության պայմաններում չհասավ սոցիալական պայքարի գաղափարին: Անդրանիկին ամենից շատ և ամենից առաջ հետաքրքրող հարցը ազատագրական պայքարն էր, իսկ այդ պայքարի միակ ռեալ ուժը նա տեսնում էր ամբողջ

հայ ժողովրդի կազմակերպված պայքարի, մյուս ճնշված ժողովուրդների աջակցության և եվրոպական տերությունների օգնության մեջ, օգնություն, որի բուն էությունը և նպատակը դժբախտաբար ուշ հասկացավ:

Սուլթանիզմի «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը արգելակեց ժողովուրդների միասնական ճակատ ստեղծելուն: Հայ ժողովուրդը մեն մենակ մնաց թուրքական զորքերի և վայրենի ցեղապետերի հարձակումների հանդեպ: Անդրանիկը շարունակում էր հույս կապել եվրոպական տերությունների օգնության հետ մինչև այն ժամանակ, երբ դաժան փորձություններից հետո ըմբռնեց, որ իմպերիալիստները վարում են շահամոլ, փոքր ազգերին կուլ տալու քաղաքականություն: Դրանից հետո նա երես թեքեց նրանցից: Ուշագրավ է, որ կյանքի փորձով իմաստնացած ազգային-ազատագրական պայքարի հերոսը առաջին ռուսական հեղափոխության մեջ գտավ հայ ժողովրդի փրկության հույսերը: Շարունակելով իր բռնած այդ ուղին, նա հավատարմության ձեռք մեկնեց Ստ. Շահումյանին, պատրաստակամություն հայտնեց պաշտպանել Բաքվի կոմունան: Անդրանիկը ողջունեց Ռուսաստանի Սովետական Հանրապետությունը և իրեն հատուկ հաստատակամությամբ ընդունեց հայ ժողովրդի փրկության ուղին՝ սովետական իշխանության ուղին:

Անդրանիկը նշում էր, որ կուսակցական որևէ պատկանելությունից անկախ, պաշտպանում է ազատության կարոտ հայ ժողովրդի շահերը: Եվ ինչպես միշտ, այնպես էլ այստեղ նա անկեղծ էր: Նա որևէ կուսակցության չի պատկանել: Սկզբում տարվելով հնչակյան կուսակցության գաղափարներով, 1907 թ. նա մի առիթով մասնակցել է դաշնակցական համաժողովին, որտեղ և լիովին հիասթափվել, դարձել է դաշնակցության հակառակորդը: Անդրանիկին իրենց կողմը գրավելու՝ դաշնակցականների հետագա բոլոր ջանքերը ապարդյուն են անցել:

Բազմաթիվ փաստական նյութերը և Անդրանիկի հրամանագրերը ցույց են տալիս, որ նա բոլոր ճնշված ժողովուրդների բարեկամության ջատագովն է եղել: Նա հատկապես կարևոր նշանակություն էր տալիս հարևան ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Անդրանիկը, սակայն, հեռու էր հայ ժողովրդի ազատագրման հեղափոխական պայքարի իսկական ուղին գտնելու հնարավորությունից, և դա բնավ նրա մեղքը չէ: Իր մոլորությունների մեջ նույնիսկ, նա ազնիվ էր, նվիրված իր ժողովրդին, գիտակցում էր նրա ճակատագրի ծանրությունը, կարողանում էր զգաստ կշռադատել ստեղծված իրադրությունը: Եվ երբ գտնվեց հայ ժողովրդի ազատագրման լենինյան ուղին՝ Հոկտեմբերի ուղին, նա առանց վարանումների ողջունեց այդ ուղին և կանգնեց նրա պաշտպանության դիրքերում:

Պատմական այս իրողությունը, որ բնորոշում է Անդրանիկին, շատ կարևոր է և ուշադրության արժանի: Անդրանիկը, իր մոլորություններով ու ընդվզումներով հանդերձ, մնաց որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոս և որպես այդպիսին նրա նվիրական գործը իր հաստատուն տեղն ունի հայ ժողովրդի պատմության մեջ:

Անդրանիկը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին, Շապին-Գարահիսար գյուղաքաղաքում (Արևմտյան Հայաստան): Նրա հայրը՝ Թորոս Օզանյանը, արհեստավոր էր, բայց զբաղվում էր նաև վաճառականությամբ: Առևտրական նպատակներով մոտակա քաղաքները գնալիս, նրան հաճախ ուղեկցում էր նաև Անդրանիկը: Այդ ուղևորությունները, որոնք շատ գաղտնիքներ էին բացում հետաքրքրասեր պատանու համար, եղան նրա առաջին դպրոցը: Հայրը, ի բնե խելացի մի մարդ, ինքն էլ էր ցանկանում, որ որդին աշխարհ տեսնի: Բայց, ինչպես ամեն մի հայր, նա ուզում էր որ Անդրանիկը շարունակի իր գործը, վաճառական դառնա, հարստություն դիզի և դրանով աչքի ընկնի: Ավելին, վաճառական միջավայրի ազդեցությանը ենթարկված հայրը ջանում էր որդու մեջ այն համոզումը պատվաստել, թե միայն հարստություն դիզելով է հնարավոր փրկել կեղեքվող ժողովրդին, արժանանալ հզոր տերությունների ուշադրությանը և նրանց օգնությամբ ազատագրել հայրենիքը: Նրա կարծիքով՝ ազատ հայրենիքում, թոթափելով օտար մրցակցության կապանքները, կարելի կլինի զարգացնել արհեստագործությունն ու առևտուրը: Երբ Թորոսի առևտրական գործերն անհաջողության մատնվեցին, և խորտակվեց նրա երազանքը, հյուսնի արհեստը դարձավ նրա միակ ապավենը, և նա սկսեց Անդրանիկին բարեխղճորեն սո-

պարեցնել ժառանգական իր շնորհը, որ կարիքի դեպքում կարողանա ապրուստը հոգալ:

Սակայն Անդրանիկի տարերքն այլ էր: Դեռ փոքր հասակից նա տարված էր ռազմական խաղերով ու հակում ուներ դեպի զենքը, անչափ սիրում էր ձի քշել: Ամեն անգամ նա խնդրում էր հորը մանկական նոր զենք ու զրահ գնել և օրնիբուն խաղում էր դրանցով: Ընկերների հետ մրցելիս Անդրանիկը իր ճարպկությամբ ու ճմտությամբ միշտ էլ հաղթող էր դուրս գալիս: Նա հանախ կազմակերպում էր բուռն խաղեր և ընկերներին հանդուգն ձեռնարկումների դրդում: Երեխաներին «բանակների» բաժանած, նա գոռում-գոչյունով պատերազմ էր հայտարարում, ճակատամարտ տալիս: Պատահում էր, որ երբեմն ոգևորության պահին, դիմադրողների քիթն ու մուրթն էր ջարդում և առիթ տալիս դժգոհությունների: Հարևանները, բոլոր խաղընկերները, սակայն, նրան սիրում էին, և բարձր գնահատում նրա համարձակությունը: Շատ ծնողներ իրենց երեխաներին դաստիարակելիս, որպես լավ օրինակ, մատնացույց էին անում կտրին Անդրանիկին, իսկ նա, իսկապես, շատ բանով էր օրինակելի, շատ հոգատար էր և ուշադիր դեպի իր ընկերները, պատրաստ էր ամեն ինչում օգնելու, ունեցածը կիսում էր նրանց հետ, չէր սիրում վախկոտներին, նվնվացողներին, ընկերոջ գաղտնիքն ուրիշին ասողներին, ոգևորում էր քաջ պատանիներին, լիաթոր հրվում կտրին տղաներով:

1875 թ. տասնամյա Անդրանիկն ընդունվեց տեղի ազգային Մուշեղյան վարժարանը, ուր մնաց յոթ տարի, վաստակելով ուսուցիչների և դասընկերների սերն ու համակրանքը: Նրան առանձնապես գրավում էին հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագները, քաջ Վարդանի, Դավիթ Բեկի, Աղասու և ուրիշների անմոռաց կերպարները:

Ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, նա միաժամանակ լցվում է ատելությամբ դեպի բռնակալներն ու հարստահարողները և կյանքի նպատակը դարձնում հայրենիքն ու հայրենակիցներին, նրանց ճիրաններից փրկելը:

Դպրոցում նա կլանված կարդում էր ազգային հպարտություն առաջացնող գրականությունը, խորապես ոգեշնչվում Նալբանդյանի, Պեշիկթաշլյանի, Ռաֆֆու, Ռուֆայել Պատկանյանի ստեղծագործություններով: Նրանց կոչը՝ զորավիգ լինել արյունքամ եղող հայ ժողովրդին, նրա հոգում պարարտ հող էր գտնում: Այդ տարիներին դեռևս թարմ էին 1862 թ. Զեյթունի հերոսական ապստամբության դրվագները: Ազգային զարթոնքի դարագլուխ կազմող այդ պատմական հերոսամարտերը ոգևորության անսպառ աղբյուր էին ինքնագիտակցության եկող երիտասարդության համար:

Հայ մտավորականության արյան ու արցունքի սարսռեցուցիչ ձայնը, որ լսվում էր իր բյուր նահատակների շիրիմից, կյանքի ու հարատևության համար պայքարի կոչ էր անում.

...Թո՛ղ լռե մունջը, անդամալույծը,
Կ�մ՝ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք—
Ու այնպես լռենք:

Դու միաժամանակ սուրբ ռոմանտիկայի մի ժամանակաշրջան էր, որը լայն ասպարեզ էր բացում մասնավորապես երիտասարդության այն խավերի համար, ովքեր հակատագրի բերումով կամ ուսում ստանալու նպատակով, ցրվել էին Եվրոպայի լուսավոր կենտրոններում և շարունակ թարմ գաղափարներ էին ներմուծում հայրենիք, ապա ժողովրդի բախտով և իրենց զգացումներով ու խոհերով վարակում ուրիշներին ևս:

Դպրոցը նոր ավարտած, 17-ամյա Անդրանիկը ամուսնանում է, իր խոսքերով ասած, «շատ սիրում օրիորդի մը հետ», որին սիրում էր անսահման հափշտակությամբ: Բայց նրանց վիճակված չէր վայելել իրենց երջանկությունը: Շուտով մահանում է կինը, իսկ մի քանի շաբաթ անց՝ նաև նորածին երեխան: Դա առաջին ծանր հարվածն էր, որ կրեց շատ նուրբ զգացումների և բարի սրտի տեր Անդրանիկը:

Օրերով հայրական արհեստանոցում առանձնացած՝ նա լուռ սգում էր իր թանկագին կորուստները: Ընկերները հաճախ հավաքվում էին նրա շուրջ, ջանում սփոփել, բայց ոչինչ չէր օգնում. դեռ թարմ էր անհուն վիշտը:

Ժամանակ անց ընկերները սկսեցին երեկոները նրան մասնակից դարձնել իրենց հավաքույթներին, որտեղ քննարկում էին հայ ժողովրդին հուզող հարցեր: Այստեղ, կարծես, Անդրանիկն ինքն իրեն գտավ: Հայրենիքի. ժողովրդի փրկության համար պայքարելն, իրոք, մի անսպասելի հայտնություն էր թե՛ իր և թե՛ ընկերների երկարատև որոնումների ճանապարհին: Հետագայում Անդրանիկը հաճախ էր անդրադառնում այն առաջին ազդակներին, որոնք իրեն մղեցին ազատագրական պայքարի փոթորկալից ասպարեզ, որտեղ նա գտավ իր տարերքը, իր կյանքի վեհ նպատակը. «Եթե կինս չմեռներ, ես հեղափոխական ակտիվ կյանքի մեջ չէի մտներ, զբաղված ըլլալով ընտանեկան հոգսերով»:

Ի՜նչ խոսք, ընդհանուր օրինաչափություններից բխող պատահական դեպքերն իրենց դերն էին կատարել:

Ահա այսպես, Անդրանիկը մեկընդմիշտ զինվորագրվեց հայ ժողովրդին թուրք բռնակալների լծից ազատագրելու սրբազան պատգամին: Նրան ոգևորում էին իր մի շարք հայրենակիցները, որոնց անունները նա ամբողջ կյանքում երախտագիտությամբ էր հիշում: Երիտասարդությանն ինքնապաշտպանության մղող Ծապին-Գարահիսարի ավագանիներից Անդրանիկը հիշում էր Ս. Ծգնավորյանին, Վոսմշաղուն քահանային, Ավագին, Մկրտիչ Սահակյանին (Ապրո), Հաջի Պողոսին: Նրանք Երզրումում տեղի ունեցած հայերի ջարդից հոգեցունց դրվագներ էին պատմում, վրեժխնդրության հուր բորբոքելով հայ երիտասարդության սրտում: Անդրանիկը վերհիշում է, որ իր ընկերների հետ, հաճախ էին մտածում այն մասին, թե ինչպես միավորվել, միասնական պայքար մղել ընդդեմ թշնամու, որը հեշտությամբ կոտրում էր հայերի անջատ խմբերի դիմադրությունը: Նա վերհիշում է իր համախոհներից մեկի խոսքերը. «Մենք բոլոր երիտասարդներս, նաև մեր հայ աղաները, միշտ իրարու հետ կկռվենք, չնչին բաներու համար կդիմենք կառավարության. նա մեզի կբանտարկե, երկու կողմից կաշառք կուտե և այդպիսով մեզի կջնջե: Փոխանակ այդպես վարվելու՝ մենք միանանք, սերով լինենք, ընկերություն կազմենք, միմյանց պաշտպանենք, փող հավաքենք, շենքեր առնենք, մեր դատերը մեր ձեռքով ընենք, լավ չըլլա՞ր»:

Անդրանիկը դրան պատասխանում է. «Ինչի չէ, շա՜տ լավ կլլա»:

Հայրենիքին օգտակար լինելու Անդրանիկի այսօրինակ մտորումներն աստիճանաբար ավելի են հասունանում: Միաժամանակ նա պահանջ է զգում այդ մասին խորհրդակցել կյանքի դասերով իմաստնացած մարդկանց հետ, իմանալ նրանց կարծիքը, ստուգել ինքն իրեն: Երկար մտորումներից հետո Անդրանիկը վերջապես որոշում է սիրտը բացել իր նախկին վարպետ Մակարին, որին շատ էր սիրում ու վստահում: Հայ ժողովրդի վշտերով ու հոգսերով տարված վարպետը, իմանալով վառվռուն երիտասարդի մտորումների մասին, ինքը ևս ոգևորության նոր լիցք է ստանում: Նա գրկում ու համբուրում է Անդրանիկին, հաջողություն մաղթում նրան: Վարպետի հավանությունն ստանալուց հետո, Անդրանիկը և նրա մյուս համախոհները, նրանց հետ նաև վարպետ Մակարը և ուրիշները սուրբ ուխտ են անում՝ ծառայել հայրենիքին ու ժողովրդի ազատագրության գործին:

Այսպես, ինքնաբուխ ստեղծված, երիտասարդության թելադրանքով ծնվում, տարածվում էր՝ ազատագրական պայքարի սուրբ գաղափարը, տիրապետում ժողովրդական զանգվածներին: Կարծես ինքն իրեն ստեղծվում էին խմբեր ու խմբակցություններ, որոնք, անկախ նույն ժամանակներում գործող քաղաքական կուսակցություններից, որդեգրվում էին հայ ժողովրդի փրկության ու ազատագրության վեհ նպատակներին, բնական տրամաբանությամբ կանգ առնում այդ նպատակների իրագործման ճիշտ ուղու վրա: Եվ հակառակ դաշնակցական. բախտախնդիրների ճիգերին, իրենց ծառայությունը համարելու հայ ազատագրական շարժումները, հազար անգամ իրավացի է Անդրանիկը, երբ գրում է. «Այս երդումը եղավ՝ առանց մեզ ընելու, թե ինչ կուսակցության կպատկանենք. մենք չգիտեինք ալ թե կան զանազան կուսակցություններ»:

Անդրանիկն իր հուշերում բազմաթիվ փաստեր է բերում նաև իրենց շարքերը խցկված ծախու դավաճանների մասին: Դրանցից սեկի՝ կաթոլիկ խանութպանի քիթն ու մոութը ջարդելու համար նա բանտ է նետվում և ապա՝ «զանազան պաշտոնյաներու» կաշառ տալով, ազատվում. «հայրս էլ երաշխավոր կանգնեց»: Շատ չանցած պատահում է մեկ ուրիշ դեպք, որ դառնում է բախտորոշ: Մի օր Անդրանիկի հայրը տուն է վերադառնում գլուխը արյունոտված. «Ի՞նչ է պատահել քեզի, հայրիկ»,— հարցնում է Անդրանիկը:— Շունին մեկը գլուխս կոտրեց, անիրավ տեղը,— պատասխանում է հայրը»:

Անդրանիկը որոշում է վրեժ լուծել: Եվ ահա մի օր հանդիպելով չարագործին, կռվի է բռնվում նրա հետ, տապալում և լավ ջարդ տալիս: Գիտակցելով հանդերձ, որ անպատիժ չի մնա իր քայլը, նա չի մտածում իր փրկության մասին, ինքնասիրությունը թույլ չի տալիս փախչել, կամ թաքնվել: Ոստիկանության ճանկը ընկնելով, Անդրանիկը բանտ է նետվում, իսկ շուտով նաև դատապարտվում: Ահա այստեղ է, որ օգնության են հասնում նրա ընկերները:

Անդրանիկն այդ ժամանակ դրացի երիտասարդներից արդեն ստեղծել էր կտրիճների իր խումբը, որ մանկական խաղերից անցել էր գիտակցված զինավարժության: Նրանք շատ հաճախ էին հավաքվում գյուղական օջախի շուրջ, անքուն գիշերներ անցկացնում, ունկնդրում փորձված հայդուկների հերոսապատումները և պատրաստվում զորավիգ կանգնելու հարազատ ժողովրդին: Այդ կտրիճներն էին, որ փորձեցին իրենց ուժն ու հմտությունը. 1884 թ. մի գիշեր նրանք ծպտված թափանցեցին բանտ և փախցնելով Անդրանիկին՝ առևտրական քարավանի հետ ուղարկեցին Պոլիս, ուր իր գոյությունը պահպանելու համար, որպես հյուսն, սկսեց աշխատել հայ մեծատուններից մեկի արհեստանոցում:

Պոլիսն իր բուռն կյանքով ապշեցուցիչ տպավորություն գործեց երազող երիտասարդի վրա: Նա անմիջական շփման մեջ մտավ հայկական շրջանների հետ, նոր ընկերներ ու համախոհներ գտավ, ծանոթացավ արյունարբու Սուլթանի քթի տակ մշակվող հայ ազատագրական շարժման ծրագրերին, արևմտահայ մտավորականության տրամադրություններին: Եվ այստեղ, գավառահայ երիտասարդների ու պանդուխտ հայրենասերների շրջանում, Անդրանիկը բացում է իր սիրտը, պատմում հայ ժողովրդի ազատագրման իր դիտավորությունների մասին: Բոլորը հրապուրված լսում են նրան, շատերը ձգտում մտերմանալ նրա հետ:

Անդրանիկը գյուտ էր հայրենասերների համար: Նոր ընկերներն անմիջապես օգնում են նրան, գործի դնում, հոգ տանում, որ ապահով լինի «ոստիկանության չար և վտանգավոր հետապնդումներից»: Մեկն, օրինակ, նրա մասին ասել է. «Հրաշալի խմոր է: Այս երիտասարդը պետք է դաստիարակել...»: Մեկ ուրիշն էլ հրճվանքով ավելացրել՝ «Ես ոչ մեկ ուրիշ գավառացի չեմ տեսած այնքան հանդուգն, որքան այս տղան»: Եվ այսպես, «իր ընկերներուն շնորհիվ», Անդրանիկն աստիճանաբար «կծանոթանա ավելի լայն շրջանակի, ավելի հասուն և լուրջ մարդոց», Պոլսի հայ հասարակական կյանքում տեղի ունեցող բուռն բախումների ու ընդվզումների ազդեցության տակ փարում ազատագրական շարժման ավելի ձևավորված գաղափարներին, տարվում հայդուկային գործելակերպով, պայքարի անարխիստական ձևերով ու մեթոդներով: Դրանք էլ անջնջելի կնիք են դնում նրա ապագա կյանքի ու գործունեության վրա: Ավելին, շատ շուտով Անդրանիկն առիթ է ունենում դրսևորելու իր ըմբոստ բնավորությունն ու ոչ մի սահման չճանաչող քաջասրտությունը: Հայ մտավորականների նկատմամբ Պոլսի ոստիկանապետի կիրառած դաժան հալածանքներն ու բռնությունները լցնում են նրա համբերության բաժակը և մի օր սրի հատու հարվածով վերջ է տալիս ոստիկանապետին ու անհետանում:

Անդրանիկն ուղղամիտ էր և հետևողական: Հաստատակամությունն ու վճռականությունը, դեպի հայրենիքն ունեցած անհուն սիրո հետ միասին, դարձան նրա հոգեկան կերտվածքի ու բնավորության կարևոր գիծը: Սակայն նա շուտով համոզվում է, որ անհատական տեռորով, անարխիստական գործելակերպով չես բուժի հայոց վերքերը. շարքից հանված ոստիկանին կամ փաշային անմիջապես փոխարինում են նորերը՝ ավելի դաժան ու անհանդուրժելի: Պետք է զինել ժողովրդին, ստեղծել զինված խմբեր ու աշխարհազորային միավորումներ, ահա նրա եզրահանգումը:

Այդ ուղղությամբ առաջին քայլը ձեռնարկում է հենց ինքը՝ Անդրանիկը: Զինագործությանը հիմնավորապես ծանոթանալու նպատակով նա աշխատում է Պոլսի Տոլմա Բախչեից ոչ հեռու ընկած Սաշկա Խշլասի կոչվող վայրում գտնվող զենքի գործարանում, ուր նրա գործակիցներն էին 75 հայ բանվորներ: Աշխատանքը ծանր էր: Նրանց միակ վարձատրությունը «գյավուր» անարգական անունն էր: Այստեղ նա երկար չաշխատեց: Շուտով բոլոր հայերին հեռացրին աշխատանքից, մնաց Անդրանիկը՝ իր եղբոր ընկերներով. լավ էր աշխատում և ամեն կերպ ձգտում էր փարատել բոլոր հայերի նկատմամբ տարվող կասկածները, բայց ապարդյուն...

Ճիշտ է, Պոլսում Անդրանիկն ստացավ իր գաղափարական մկրտությունը, շփվեց բանվորների հետ, ծանոթացավ տարբեր քաղաքական շրջանների ազատագրական ծրագրերին ու մտորումներին, բայց նա գործի մարդ էր: Նրա համար «Պոլսո շրջանակը այլևս կթվի նեղ բոլորանվեր հեղափոխության գործին փարելու համար»: Նա ձգտում էր օր առաջ վերադառնալ գավառ և ձեռնամուխ լինել ազգային-ազատագրական իր ծրագրի իրագործմանը: Խորհրդակցելով ընկերների հետ այդ մասին, նա ասաց. «Ես կուզեմ անցնել ավելի ներքին գավառները, Պլսթում, Կարս, Մուշ, Սասուն»:

Հայության ազատագրության ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ էր ժողովրդին կազմակերպված օգնություն ցույց տալ թե զենքով և թե պատրաստ մարդկանցով: Դրա համար նա իր ընկերների խորհրդով վճռում է անցնել Եվրոպայի հայաշատ վայրերը և հայրենիքի ազատագրման համար ոտքի հանել հայ զանգվածներին: Շուտով նրան տեսնում ենք Ռումինիայում, ուր աշխատում էր արևմտահայությանն օգնելու միջոցներ գտնել: «11 արծաթ տվի՝ անցագիր հանեցի, որ այնպես արժե կես ոսկի և դուրս եկա գնացի Ռումինիա»,— վերհիշում է Անդրանիկը: Նա մտածում էր ավելի կազմակերպված պայքար ծավալել ժողովրդի նկատմամբ կիրառվող գազանություններին հակահարված տալու համար: Իսկ այդ տարիներին, իրոք, ամենուր մոլեգնում էր աբդուլհամիդյան ռեակցիան: Թուրք ջարդարարների գործադրած անլուր հալածանքների մասին գավառից ստացվող նորանոր լուրերի հետ Անդրանիկին էին հասնում ժողովրդի ողբի ձայնը, որն օգնություն էր աղերսում, զորավիգ կանգնելու կոչ անում:

1876-ին գրված մի վավերագիր, որն ուղղված է ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 4-րդին և որի տակ կան չորս հազար ստորագրություններ, պատմում է, որ մի քանի դար գտնվելով Օսմանյան կայսրության լծի տակ, հայ ժողովուրդը անընդհատ տագնապի մեջ է և ծանր հալածանքների է ենթարկվում Բարձր Դռան ու տաճկահայ գավառների պաշտոնյաների կողմից, որոնք ոչ միայն հափշտակում են ժողովրդի վերջին ունեցվածքը, այլև պատվազրկում կանանց ու աղջիկներին, պղծում նրանց հավատն ու սրբությունները: Այդ առթիվ արված անհամար բողոքներն ու խնդրագրերը, գրում են դիմողները, ոչ մի արդյունք չեն տվել, դրա համար էլ ստիպված դիմում են արևմտյան տերություններին, հույս ունենալով, թե գուցե քրիստոնյա պետությունները կխղճան հայերին և նրանց ևս ցույց կտան այն օգնությունը, որ պատրաստվում են ցույց տալ բուլղարներին: Հակառակ դեպքում, ավելացնում են նրանք, եթե շարունակվի այդ տանջալից կյանքը և հարսնացուները շարունակեն իրենց նշանածներին սպասել արցունքով, ապա այլևս չեն համբերի և բուլղարների օրինակով արյան գետեր հոսեցնելով, դեն կնետեն ստրկության լուծը:

Այստեղ ոչ միայն գույների խտացում չկա, այլև շատ զուսպ է ասված:

Թուրք բռնակալները հայերին տնտեսապես թուլացնելու համար ոչ միայն կողոպտում, այլ նաև հրդեհում ու ոչնչացնում էին նրանց ամբողջ ունեցվածքը: Այդպես պատահեց 1876 թ. դեկտեմբերին, Վանում, երբ ոստիկանների ու զինվորների ցուցումով խուժանը հրդեհի մատնեց քաղաքի կենտրոնում գտնվող տներն ու խանութների թաղամասը: Սկսվեց թալանն ու ավերածությունը: Ստեղծված իրարանցման մեջ շատերը զոհվեցին, իսկ ողջ մնացածները սարսափահար հարցնում էին միմյանց. ի՞նչ կլինի մեր վիճակը: Եթե Ռուսաստանի հայերը մեզ օգնության չգան, ապա մեզ մահ է սպասում, ինչպես ասվում է Վանից ստացված մի նամակում: Թուրքերը խլեցին մեր ունեցվածքը և հիմա մեզ սպառնում են մահով: Մեր միակ մեղքն այն է, որ մենք քրիստոնյա ենք, և այն էլ հայ: Եթե ուրիշ քրիստոնյա ժողովուրդներին պաշտպանում

են հավատակից պետությունները, ապա հայերին ոչ ոք չի պաշտպանում: Մենք այժմ հուսով ենք նայում դեպի Ռուսաստան, որը մեզ կարեկցող միակ երկիրն է:

Քանի անգամ մեր պատրիարքը դիմել է Մեծ Դռանը, բայց նրա դիմումները միայն վնաս են բերել, շարունակում են նամակի հեղինակները: Մի կողմից սուտ խոստումներ են տվել, մյուս կողմից՝ գաղտնի հրամաններ են արձակել՝ մեզ այնպիսի տանջանքների ենթարկել, որ այլես ուժ չունենանք բողոքելու: Մենք նախկինում ևս հալածվում էինք, սակայն Սերբիայի և Բուլղարիայի ապստամբությունից հետո, հատկապես վերջերս, երբ Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատերազմի վտանգ է ստեղծվել, թուրքերը վիրավորված գազանի պես ամենայն կատաղությամբ են հարձակվում հայերի վրա, ամեն տեսակ տանջանքների ենթարկում, ասելով,՝ «Դուք էլ այդ գյավուր-ռուսների նման նույն հավատքն ունեք»: Եվ հետո արևմտահայերը դիմելով ռուսահայերին, գրում են. մեր հույսը դուք եք, եղբայր ռուսահայեր, խնդրում ենք՝ օգնեցեք մեզ:

1877 թ. օգոստոսին Դարալագյազի 351 հայերի ստորագրությամբ կաթողիկոսին մատուցված նամակում էլ նշվում է, որ արևմտահայությունը Թուրքիայի դարավոր լծի տակ արյունաքամ է լինում, որ իրենք ցնցվում են, երբ իմանում են Վանի, Բայազետի և Արևմտյան Հայաստանի այլ մասերի հայերի սարսափելի ծանր վիճակի մասին: Քանի որ դժբախտ Հայաստանը մնում է Թուրքիայի տիրապետության տակ, հայերի արյունը շարունակ կհոսի: Նրանք խնդրում են, որ կաթողիկոսը Արևելյան Հայաստանում և Ռուսաստանում ապրող բոլոր հայերի անունից դիմի Ռուսաստանի կայսրին պաշտպան կանգնելու հայերին, որ իրենց տրվեն այն իրավունքները, որոնցից օգտվելու են Թուրքիայում ապրող մյուս քրիստոնյա ժողովուրդները:

Առհասարակ հայ ժողովուրդը և նրա հասարակական-քաղաքական գործիչները միշտ էլ այն կողմնորոշումն են ունեցել, որ «հայկական հարցի լուծման բանալին գտնվում է ոչ թե Բեռլինում կամ էլ Լոնդոնում, այլ Պետերբուրգում»:

«Թայմս» թերթի թղթակից Կ. Նորմանի՝ 1877 թ. օգոստոսի 24-ի հաղորդման մեջ նշված է, որ այնտեղով, որտեղով անցել է Իսմայիլ փաշայի զորքը, հայերի վիճակը սարսափելի է: Ալաշկերտի 122 գյուղերը, բացի 9-ից, ամբողջովին ավերված են: Այն հայերը, որոնց գեներալ Տեր-Ղուկասովի նահանջի պատճառով բախտ չի վիճակվել Ռուսաստանի հովանավորության տակ անցնելու, բարբարոսաբար ոչնչացվել են, իսկ բազմաթիվ գյուղեր՝ ամբողջովին հրկիզվել: Նույն վիճակն է տիրում նաև Մուշում և Բայազետում: Այդ վայրերի բնակիչների մեծ մասը՝ տղամարդիկ, կանայք և երեխաներ, ոչնչացվել են ամենադաժան միջոցներով:

Փաստաթղթերը ցույց են տալիս, որ զգալով 1877—1878 թթ. ռուս թուրքական պատերազմի վտանգը, թուրքերն ավելի են ուժեղացնում հալածանքը հայերի նկատմամբ՝ նրանց համարելով Ռուսաստանի պաշտպաններ: Բուն պատերազմի ժամանակ ճնշումներին ու հալածանքներին ավելացան նաև մեծ չափերի հասնող կողոպուտը և սանձազերծված անիշխանության չարիքները: Սակայն ժողովուրդը, սարսափելի զրկանքներ կրելով հանդերձ, հույս էր տածում, որ կիրագործվեն Բեռլինի պայմանագրով նախատեսվող ռեֆորմները, վերջապես կլուծվի «հայկական հարցը»: Բայց տարիներն անցնում էին, իսկ Թուրքիան խոստացած ռեֆորմների փոխարեն անց էր կացնում Արբեդին վալայի վարչական բաժանման նախագիծը, որը եվրոպական պետությունները մերժել էին և, որի համաձայն Արևմտյան Հայաստանը բաժանվում էր կայմակամների (գավառների) և նախիների (տեղամասերի)՝ այն հաշվով, որ հայ բնակչությունը ոչ մի տեղ մեծամասնություն չկազմի: Վերացվում էին նաև նախկին սուլթանների թույլատրած և արդեն սովորության ուժ ստացած ներքին և եկեղեցական գործերի տնօրինության չնչին իրավունքը, համայնքին տրված որոշ արտոնությունները: Առանց պատրիարքի հետ հաշվի նստելու սուլթանը փոխում էր ցանկացած հոգևորականին, նշանակում նորերին՝ դրանով իսկ ոտնահարելով պատրիարքի՝ օրենքով սահմանված միակ իրավունքը:

Շարունակ ուժեղացող հալածանքները 1880 թ. այնպիսի չափերի էին հասել, որ ժողովրդի զինված դիմադրությունը դառնում էր անխուսափելի: Մթնոլորտն, իրոք, շիկանում էր: 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից առաջ թուրքական կառավարությունը մտցրեց նոր հարկ՝ 2 մեջիդիե ամեն մի տղամարդուց: Թուրքական զորքերի մի տեղից մի այլ տեղ փոխադրվելու ժամանակ հայկական գյուղերը պարտա-

վոր էին նրանց կերակրել: Ամեն մի ընտանիքում տեղավորում էին 5—20 զինվոր: Բացի այդ, հայերը պարտավոր էին տրամադրել զորքին փոխադրական միջոցներ: Այս ամենի հետևանքով առաջացած կամայականություններն ու բռնությունները անավոր չարիք էին բերում հայ ընտանիքներին: Երբեմն ձևականորեն գյուղացիներին տրվում էին ստացականներ, որ իբր վերցրած մթերքները հարկերի փոխարեն են: Բայց այդ բոլորը կեղծիք էր: Շատ չանցած՝ ոչ միայն չեղյալ հայտարարեցին տրված ստացականները, այլ հրաման արձակվեց 2 տարվա հարկերը միանվագ վճարելու մասին: Պատերազմից հետո Ռուսաստանին վճարելիք ռազմական տուգանքի գումարի հավաքման ամբողջ ծանրությունը ընկավ քրիստոնյա ռայայի վրա: Մշակվել էր այնպիսի օրենք, ըստ որի հայերը յուրաքանչյուր նորածին տղայի համար հարկ էին վճարում: Եթե մեկը 3—4 տղա ուներ, ապա մեծ մասամբ չէր կարողանում պարտքերը վճարել, և բանտ էր նետվում:

Արևմտահայերը իրենց հույսը դնելով Ռուսաստանի վրա. ցարի անունով բազմաթիվ համախոսականներ ու խնդրագրեր էին ուղարկում: Իրենց առաջին դիմումից երկու տարի անց (1882 թ. փետրվարի 10) Վանի շրջանի հայերը երկրորդ աղերսագիրն են ուղարկում ցարին և կրկին նկարագրելով իրենց առավել ծանրացած ու անտանելի վիճակը հայտարարում, որ եթե Ձեր հզոր ազդեցությունը մեզ չփրկի, ինչպես այդ տեղի ունեցավ Արևելյան Ռումինիայում, երբ նրանց տրվեց վարչական ինքնավարություն, ապա «տեղի կունենա աննկարագրելի դժբախտություն, որը Հայաստանը կդարձնի տանջված հայերի վերջին հույսերի գերեզմանը...»:

Վանում ռուսական փոխհյուպատոսը 1882 թ. մարտի 14-ի զեկուցագրում իրավամբ նկատում է, որ Թուրքերի հետապնդումների հետևանքով հայերի համար այնպիսի վիճակ է ստեղծվել, որ երբևիցե չի եղել: Ըստ որում, կառավարական բարձրաստիճան չինովնիկները բացահայտորեն նշում են, որ նրանք պատրաստում են մի երկրորդ Բուլղարիա և, քանի որ արդեն փորձ են ձեռք բերել, կարող են ոչնչացնել իրենց կառավարության համար ոչ հաճելի տարրերին և դրանով իսկ մեկընդմիշտ վերջ տալ «հայկական հարցին»:

Հյուպատոսի փոխանորդը, ի վերջո, նշում է, որ Վանի հայերը ում էլ որ դիմեն, նրանք, սակայն, իսկական օգնություն ապասում են միայն Ռուսաստանից: Եթե հայ ուսանողներից ոմանք ներելի մոլորությամբ հույս են կապում Անգլիայի հետ, ապա մյուս կողմից չի կարելի չընդունել այն ճշմարտությունը, որ նրանց իշխող մեծամասնությունը լիովին նվիրված է Ռուսաստանին և միայն նրա պաշտպանությանն է հավատում:

Նույն փոխհյուպատոսի 1882 թ. հուլիսի 26-ի հաղորդագրությունից երևում է, որ Վանի ազգային խորհուրդը հատուկ դիմումով խնդրել է ռուսական կառավարությանը՝ փրկել իրենց վրա հասնող կոտորածից: Ուշագրավ են նաև «Հայրենիքի իրավունքի պաշտպանության կոմիտեի» դիմումները ռուսական և եվրոպական պետությունների դեսպաններին, որտեղ, նկարագրելով հայերի վիճակը Բեռլինի պայմանագրի 61-րդ չարաբաստիկ հոդվածը ընդունելուց հետո և Թուրքիայի ձեռնարկած նոր միջոցառումները հայերին ոչնչացնելու համար, պարզորոշ ասում էին, որ վրա հասնող սպանդից կարող են փրկվել միայն նրանք, ովքեր թողնում են հայրենի երկիրը և հեռանում: «Մենք չենք ձգտում հատուկ թագավորության, քաղաքական անկախության, այլ ուզում ենք պարզապես ապրել մարդկային կյանքով,— գրում էին նրանք:— Մենք ուզում ենք հնարավորություն ստանալ վերադառնալու մեր հայրենիքը, այնտեղ ապրել խաղաղ, մշակել մեր նախնիների թողած և նրանց արյունով ոռոգված սրբազան հողը»:

Լարումն, այնուամենայնիվ, հասնում է իր գագաթնակետին, և շուտով լսվում են առաջին պայթյունները:

Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Նելիդովը 1890 թ. հուլիսի 19-ին իր կառավարության արտաքին գործերի մինիստր Գիրսին հաղորդում էր Թուրքիայի մայրաքաղաքում, հայոց պատրիարքարանի մոտ, Գում-Գապուում տեղի ունեցած հայկական ուժեղ ելույթի, թուրքերի հասցրած ջարդի և հայերի ձերբակալությունների մասին, որոնք ցնցող տպավորություն էին թողել: Կասկածում էին, որ ցույցը կազմակերպել է գաղտնի կոմիտեն: Հետո նա նշում է, որ լարված դրությունը ամեն րոպե կարող է ավելի մեծ ընդհարումների տեղիք տալ:

1890 թ. հունիս-հուլիսին Էրզրումում տեղի ունեցած հայերի ուժեղ ապստամբությունը կարծես անհազանգ հանդիսացավ և ընդհանուր շարժում առաջացրեց Թուրքիայի բոլոր հայաբնակ շրջաններում ու մայրաքաղաքում: Ապստամբության առիթը թուրքական իշխանությունների կատարած անօրինական խուզարկություններն էին հայոց եկեղեցում և Սասնասարյան վարժարանում: Նրանք էին պղծել հայոց սրբությունները և բռնագրավել թանկարժեք իրերը: Ռուսական դեսպան Նելիդովի կարծիքով էլ՝ ապստամբություն հրահրողները Լոնդոնում գտնվող հայկական կոմիտեներն էին, որոնք գործում էին անգլիական կառավարության աջակցությամբ և թուրքերի դեմ ընդհանուր ապստամբություն նախապատրաստում: Նախօրոք պատրաստվող այդ ապստամբությունը,— շարունակում է դեսպանը,— բռնկվել է Էրզրումի թուրքական իշխանությունների կոպիտ գործունեության հետևանքով: Փակելով իրենց խանութներն ու գործատները, հայերը խմբեր են կազմում ու զինվում: Թուրքական զորքերը շրջապատում են հայոց եկեղեցին, որտեղ հավաքվել էին հայ ապստամբները: Թուրք զինվորները կրակ են բացում հավաքված ամբոխի վրա: Ամբողջ քաղաքը վերածվում է պատերազմի դաշտի: Զեռք բերած շտապ միջոցների շնորհիվ մեծ դժվարությամբ կարգը վերականգնվում է:

Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Դենեֆտի հունիսի 12-ի հեռագրից երևում է, որ վիրավորվել են ավելի քան երկու հարյուր, սպանվել՝ 14 մարդ:

Այդ ապստամբությունն լայն արձագանք գտավ մի շարք շրջաններում, հատկապես Վանում և Բիթլիսում: Թուրքական կառավարությունը խստագույն կարգադրությամբ արգելել էր բոլոր թերթերին որևէ հաղորդում տպագրել այդ դեպքի մասին: Հակառակ դրան, Կոնստանդնուպոլսի հայկական շրջանները թափանցած տեղեկությունները մեծ անհանգստություն էին պատճառում: Ավելին. հայ ազատագրական շարժման ղեկավարներն արդեն համընդհանուր ապստամբության կոչ էին անում, միաժամանակ նշելով, որ ապստամբներին անմիջապես օգնության կգան Ռուսաստանի և, հատկապես, Անդրկովկասի հայ զանգվածները:

Վերոհիշյալ հաղորդագրությունը երևան է հանում ցարական Ռուսաստանի դեսպանի՝ քրիստոնյաներին «հովանավորելու» երկդիմի քաղաքականությունը. նա խորհուրդ է տալիս իր կառավարությանը հայկական շարժմանը «քաղաքական նշանակություն չտալ և չնպաստել, այսպես կոչված, հայկական հարցի ստեղծմանը: Մինչդեռ տեղի հայերը,— շարունակում է նա,— վերջին դեպքերին ցանկանում են տալ այնպիսի գունավորում, որը խրախուսվում է Անգլիայի կողմից և այնտեղից եկող հայերից: Հիրավի, անգլիական կառավարությունը նպատակ է դնում դժվարացնել մեր (Ռուսաստանի — Ծ. Ա.) վիճակը Ասիայում և բարդացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, մեր ասիական սահմաններում ստեղծել բարդ քաղաքական հարց, որը ելնում է Թուրքիայի տերիտորիայում ցրված հայերի ազատագրական ձգտումներից»:

Ցարիզմի գաղութային քաղաքականության ջատագով դեսպան Նելիդովն, այնուհետև, նշում է, որ «պետք է նման դեպքերում շատ զգույշ քաղաքականություն վարել. մի կողմից չհրաժարվելով քրիստոնյաներին հովանավորելու և Մեծ Դռան առջև նրանց շահերը ներկայացնելու ավանդական քաղաքականությունից, մյուս կողմից ջանալով, որ մեր կատարած քայլերը քաղաքական բնույթ չստանան, իսկ համահայկական ձգտումների հովանավորումն առավել քան վտանգավոր է»:

Էրզրումում ծագած հայկական շարժումը ուժեղ արձագանք գտավ ոչ միայն Թուրքիայում, այլև արտասահմանում: Այդ շարժման մեջ ակտիվ դեր էր խաղում Էրզրումի անգլիական հյուպատոսությունը, որը մասնակցել էր ապստամբների չորս կետից բաղկացած պահանջների մշակմանը: Մինչդեռ Թուրքիայում ռուսական դեսպան Նելիդովը այդ մասին գրում էր. «Մեր շահերին հակառակ է ուռճացնել այդ գործը և նրան տալ հայկական ժողովրդական շարժման բնույթ, ինչպես այդ ցանկանում է տալ Անգլիան: Մեզ համար կարևոր է ընդհանրապես պաշտպանել քրիստոնյաների իրավունքը և ապահովել մեր սահմանների անվտանգությունը»:

Հայկական շարժումները ճնշելու նպատակով, սուլթանի հրամանով, թուրքական բանակի 4-րդ կորպուսի հրամանատար Զաքի փաշան արշավեց դեպի Էրզրում, Մարաշ, Բիթլիս և Վան: Այդ շրջաններում նա հանդիպումներ ունեցավ տեղական ցեղապետերի հետ, որոնք սուլթանին հավատարիմ մնալու խոստումներից բացի, հա-

վանություն տվեցին Զաքի փաշայի պլաններին ու խոստացան հայկական շարժումներ ճնշելու համար 1000 զինվորից բաղկացած ջոկատ կազմել: Զաքի փաշայի այդ ծրագիրն արժանացավ սուլթանի և՝ թուրքական բանակի հրամանատարության հավանությանը: Շուտով թուրքական դահիճները ձեռնամուխ եղան այդ ծրագրի իրականացմանը.

Այդ նույն նպատակով Երզինջան ժամանեց Մուզաֆար փաշան և գործնական քայլեր ձեռնարկեց տեղական ցեղապետերի ջոկատների կազմակերպման ուղղությամբ: Սակայն թուրքական իշխանությունները զգում էին, որ այդ միջոցներով դժվար է կանխել արդեն մեծ ծավալ ստացած հայկական շարժումները: Ռուսական դեսպանի օգոստոսի 11-ի հաղորդագրությունից՝ ուղղված Ռուսական կայսրության արտաքին գործերի մինիստրին, երևում է, որ Էրզրումում տեղի ունեցած զինված ընդհարումները և մյուս վայրերում սկսված հայկական շարժումները խիստ մտահոգություն են պատճառել սուլթանին, որ նա ամեն կերպ ցանկանում է գաղտնի բանակցություններ մեջ մտնել ռուսական դեսպանության հետ, օգտագործել ռուսների ազդեցությունը և նրանց օգնությամբ կանխել հայկական ելույթները:

Այդ նույն ժամանակ օտար պետությունների ներկայացուցիչները ձգտում էին սուլթանին հավաստիացնել, թե հայկական շարժումների դրդողն ու պատճառը Ռուսաստանն է, դրանով իսկ սրելով երկու տերությունների հարաբերությունները: Մինչդեռ Ռուսաստանը մի կողմից ջանք չէր խնայում հերքել այդ կարծիքը և ցույց տալ, որ հայկական շարժումները իր կողմից որևէ պաշտպանություն չեն կարող գտնել, իսկ մյուս կողմից՝ ցանկանալով շահել հայերի ու մյուս քրիստոնյա ժողովուրդների համակրանքը, աշխատում էր համոզել սուլթանին՝ որոշ բարեփոխություններ կատարել: Հայ ժողովուրդը հայտարարում էր Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանը «իր բարի կամքով սիրում է մեր ժողովրդին (ռուսներին —Ծ. Ա.) և մենք նրան երբեք չենք մոռանա: Դա կատարվում է շնորհիվ այն բանի, որ դաժանությունը տեղի է տալիս մարդկայնությանը և մենք կարող ենք ավելի բարեկեցիկ վիճակ հուսալ մեր հայ եղբայրների համար»:

Դեսպանի ասելով, սուլթանը ելնելով ստեղծված վիճակից, կարծես թե որոշ բարեփոխումներ կատարելու ցանկություն է դրսևորում, բայց դա սոսկ խորամանկ քայլ էր, որ արվում էր հայերին հուսադրելու և ապստամբությունը կանխելու նպատակով: Սուլթանը փորձում էր ապստամբության մեղքը ամբողջությամբ բարդել «անշնորհակալ» հայերի և հոգևոր իշխանությունների վրա՝ փաստարկելով նրանց միջև ծագած վեճերն ու անհամաձայնությունները:

Կոստանդնուպոլսի հայկական վերնախավի որոշ ներկայացուցիչներ լինելով սուլթանի հլու կամակատարները, և տարված անձնական շահով, դավաճանում էին հարազատ ժողովրդին՝ ընդդիմանում ազատագրական պայքարին: Այդ տեսակետից բնորոշ է 1890 թ. նոյեմբերի 29-ին մի խումբ հայ մեծատունների սուլթանին հղված ստորագրած նամակը, ուր ասված էր, թե սուլթանների հինգդարյա տիրապետության տակ հայերը, իբր թե, օգտվել են բոլոր բարիքներից, թե նրանց «միակ ցանկությունն է՝ ապրել Օսմանյան կայսրության հայրական հովանավորության տակ»: Հայ ժողովրդի ամենուր բարձրացող ելույթներն ու բողոքի ցույցերը նամակի հեղինակները հայտարարում էին անօրինական, քանի որ իրենք՝ մեծատունները, դեմ էին այդ շարժումներին և չէին մասնակցում դրանց:

Այդ նամակին սուլթանի անունից տրված պատասխանում նշվում էր, որ «Նորին Մեծությունը մեծ հաճույքով ընդունեց այն և ցանկանում է տեսակցություն ունենալ նրա հեղինակների հետ»: Հույս հայտնելով, որ նրանք «իրենց ազդեցությամբ կարող կլինեն հայ զանգվածներին ետ պահել հեղափոխական ելույթներից»:

Իսկ ո՞րն էր իրողությունը: Դեսպան Նելիդովը 1890 թ. նոյեմբերի 22-ին հաղորդում էր մինիստր Գիրսին, որ ծագումով հայ բարձրաստիճան պետական չինովնիկների համախոսական-նամակը հարկադրաբար գրված մի փաստաթուղթ է, և որ «նրա հեղինակներն իրենց սրտի խորքում բոլորովին էլ անկեղծ չեն»: «Ես առիթ եմ ունեցել,— շարունակում էր Նելիդովը,— զրուցելու նրանցից մի քանիսի հետ և նրանք ցավով խոստովանեցին, որ ստիպված են եղել նման փաստաթուղթ ստեղծելու, որպեսզի հրաժարվեն հեղափոխականների հետ համախոհ լինելուց, ապահովեն իրենց գոյության հնարավոր պայմանները. մերժեն մշտական կասկածներն ու հալածանք-

ներ»: Հասա՞ն արդյոք նրանք իրենց նպատակին, հարց է տալիս Նելիդովը և պատասխանում. «Դժվար է ասել: Հայերի ձերբակալություններն ու հետապնդումները շարունակվում են»:

Թուրքիայում ծավալվող հայ ազգային-ազատագրական շարժումներն, իհարկե, մեծ մտահոգություն էին պատճառում ցարիզմին, մանավանդ, որ դրանք լայն արձագանք ու աջակցություն էին գտնում Կովկասի և ամբողջ Ռուսաստանի հայկական շրջաններում: Այդ շարժումները մի կողմից ուժեղացնում էին հեղափոխական խմորումները Ռուսաստանի ներսում, իսկ մյուս կողմից ստիպ տալիս, որ Թուրքիան Ռուսաստանին մեղադրի իր ներքին գործերին խառնվելու համար: Բնավ գաղտնիք չէր, որ ռուսահայերը թե կամավորներով և թե զինամթերքով մեծ օգնություն էին ցույց տալիս արևմտահայերին: Եվ դա հայտնի էր թե սուլթանին և թե ցարին:

Ստեղծված իրադրությունից հմտությամբ էր օգտվում նաև անգլիական դիվանագիտությունը, որը հանդես գալով հայկական շարժումները համակրողի դերում, միայն մի նպատակ էր հետապնդում՝ դժվարացնել ռուսների վիճակը Ասիայում, խանգարել նրանց ազդեցության ուժեղացմանը և «Թուրքիայի հետ ընդհարվելու ստիպ ստեղծել»:

Արդեն բազմիցս վկայակոչված ռուս դիվանագետ Նելիդովը կառավարության՝ ուշադրությունն էր հրավիրում այն իրողության վրա, որ «հայկական հարցը» կանգնում էր ռուսիայի առջև իր երկակի կողմով. մի դեպքում որպես Ասիական Թուրքիայի ողբալի վիճակում գտնվող ճնշված և ուսեզրկված գյուղական և քաղաքային բնակչության դժգոհությունը՝ ուղղված օսմանյան լծի և հարևանների ճնշման դեմ և երկրորդ՝ որպես հողազուրկ ագիտատորների հակակառավարական դավադրություն, որը ելնում է ամենաօայրահեղ գաղափարներից և խնդիր է դնում քաղաքականապես միավորել բոլոր հայերին և ստեղծել անկախ հանրապետություն: Նելիդովը նկատում է, որ հայկական շարժման նշված առաջին կողմին պետք է համակրանք ցույց տալ և «հնարավորին չափ օգնել, մանավանդ, որ նրա մասնակիցները իրենց հույսը գլխավորապես կապում են Ռուսաստանի հետ, իմանալով, թե ինչպիսի անշահախնդիր ինքնազոհությամբ մենք մեր արյան գնով ազատագրել ենք թուրքական լծի տակ հեծող քրիստոնեական ժողովուրդներին»:

Ինչ վերաբերում է «հայկական հարցի» երկրորդ կողմին, ապա նկատի ունենալով, որ շարժման ղեկավարները և նրանց կենտրոնը գտնվելով Արևմտյան Եվրոպայում, գլխավորապես հենվում էին Արևմուտքի և, հատկապես, Անգլիայի օգնության վրա և ըստ այդմ ուղղություն տալիս հայկական շարժմանը, Նելիդովը կարծում էր, որ կոմիտեն կարիք ունի տեղական գործիչների, որոնց օգնությամբ էլ կազմակերպում ու շարժման մեջ է դնում հայ ժողովրդի լայն մասսաներին՝ «խոստանալով լավացնել նրանց դառը վիճակը, ապահովել նրանց ազատությունն ու երջանկությունը»:

Ահա, հայկական հարցի հենց այս ուղղությունն է, որ դժվար կացություն է ստեղծում Ռուսաստանի համար: «Կարո՞ղ ենք արդյոք Եվրոպայում ժողովրդաազատագրական շարժումներից ինքնաբուխ կերպով սկիզբ առած թուրքահայերի ազատություն ձեռք բերելու ձգտմանը բոլորովին բացասական վերաբերմունք ցույց տալ»,— հարցնում էր նա: Մինչդեռ ռուսական պետության շահը միանգամայն այլ բան էր պահանջում: Հարցին հարցով պատասխանելով՝ ցարական դեսպանը շարունակում էր. «Մեզ համար ցանկալի՞ է արդյոք, թույլատրել նման շարժման տարածումը մեր հպատակների շրջանում: Վերջապես, ցանկալի՞ է արդյոք Ռուսաստանի սահմանագծի վրա, Գալիցիայի նման, թեկուզ և կիսանկախ, հայկական պրովինցիայի ստեղծումը, որը կդառնա մեր երկրի ծայրամասերի ցեղակից բնակչությանը դեպի իրեն ձգող կենտրոն, ամեն տեսակ քաղաքական, սոցիալիստական ու հեղափոխական, մինչև անգամ անարխիստական ինտրիգների ու պրոպագանդայի բուն»: Պատասխանն, ինքնընստինքյան, պարզ էր:

Ահա՛ թե ինչպիսի երկդիմի քաղաքական դիրքորոշում էր ընդունում ցարական դիվանագիտությունը հայկական հարցում: «Բարեբախտաբար, հայերը Փոքր Ասիայում ոչ մեծ խմբով ցրված լինելով ավելի ուժեղ, բայց հետամնաց թուրքերի, քրդերի, չերքեզների և նեստորականների միջև, քիչ շանսեր ունեն իրենց ծայրահեղ ցանկությունների իրականացմանը հասնելու համար»,— թեթևացած շունչ էր քաշում նա և խորհուրդ տալիս իր կառավարությանը՝ ազդել Թուրքիայի վրա, ինչքան այդ

թույլ կտա նրա հետ բարեկամական հարաբերություններ պահպանելու սկզբունքը՝ հայերի անվտանգությունն ու նրա ունեցվածքի անձեռնմխելիությունը ապահովելու, մեծ տերությունների կողմից ընդունված Բեռլինի տրակտատի 61-րդ հոդվածը կատարելու համար: Ի դեպ, ծանոթանալով Նելիդովի զեկուցագրին, այդ կետի առնչությամբ, գրության լուսանցքում ցարը գրել է. «Այդ մենք կատարում ենք»:

Ինչ մնում է «հեղափոխական շարժման առաջնորդների կողմից պատրաստվող հեղաշրջմանն ու նրանց գործելակերպի նկատմամբ ունենալիք վերաբերմունքին (այստեղ արդեն գտնվել են ռումբեր), մենք պետք է անզիջող և խիստ լինենք թե՛ մեր հպատակների և թե՛ Թուրքիայի հայերի նկատմամբ»:

Ցարը հավանություն տվեց այդ փաստաթղթին, որ իր մեջ բեկել է ռուսական կառավարության ավանդական քաղաքականությունը ծայրամասերի փոքրամասնությունների նկատմամբ:

1890 թ. ամռանը բավականին լարված վիճակ էր ստեղծվել հատկապես Բալկանյան թերակղզում, որտեղ ընդհարումները թուրքերի և մյուս ժողովուրդների միջև սովորական բան էին դարձել: Մասնավորապես լուրջ բարդություն առաջացրեց Կոսովի վիլայեթի գլխավոր քաղաք Պրիշտինում սերբական փոխդեսպան Մարինկովիչի սպանությունը, որի համար Սերբիայի ներկայացուցիչը բողոքի նոտա ներկայացրեց Թուրքիային՝ հանցավորներին պատժելու և սպանության ու սերբիական դրոշակը վարկաբեկելու համար բավարարություն տալու պահանջով:

Այդ բոլորը խիստ մտահոգություն էր առաջացրել Թուրքիայի կառավարող շրջաններում: Նրանց կարծիքով, այդ ամենը հրահրում էին Ավստրո-հունգարական կայսրությունը և մյուս պետությունները՝ նպատակ ունենալով Բալկաններում ստեղծել լարված դրություն, մինչդեռ ամենևին էլ հիմք չկար երկրի ներսում ծավալվող քաղաքական ընդվզումները վերագրել միայն արտաքին միջամտություններին: Հիմնական պատճառները շարունակում էին մնալ Թուրքիայում իշխող պետական կառուցվածքը, ժողովուրդների ծայրահեղ ծանր վիճակը, որ վաղուց արդեն անհամատեղելի էր մարդու գոյության տարրական պայմանների հետ:

Բուլղարիայի հետ հարաբերությունների բարդացումը և երկրի ներքին ծանր վիճակն ավելի էր ուժեղացնում ընդհանուր տագնապը: Սուլթանը գլուխը կորցրած սկսեց կատաղի դաժանությունների դիմել: Անգամ Շեյխ-ուլ-Իսլամի գործունեությունը կասկածի տակ առնվեց և դիտվեց իբրև դավադրություն:

Մզկիթներում տեղի ունեցող կրոնական առօրյա արարողությունները, մինչև անգամ սովորական հավաքույթները դիտվում էին որպես սուլթանի դեմ ուղղված դավադրության նախապատրաստություն: «Սարսափահար եղած Աբդուլ Համիդի հրամանով հոգևոր սաների պարագլուխները հրավիրվեցին պալատ և մի քանի օր այնտեղ պահվելով, խիստ հարցաքննության ենթարկվեցին: Բացի Շեյխ-ուլ-Իսլամից, դրանց թվում էր նաև առաջներում սուլթանի սերը վայելած և նրա վրա ազդեցություն ունեցող Շեյխ Սեֆերը...»: Այս բանը մեծ դժգոհություն և իրարանցում առաջացրեց մուսուլմանական հոգևորականության շրջանում: Հետևանքը եղավ այն, որ դժգոհողներից ոմանք ձերբակալվեցին ու աքսորվեցին:

Սակայն դա ևս չօգնեց. գնալով մթնոլորտը ավելի էր շիկանում. Բուլղարիայի նոտան, Էրզրումի ժողովրդական ելույթները, Զեռնոգորիայի հետ տեղի ունեցած ընդհարումները, իսկ այնուհետև Բեյրութի շրջանի թուրքական ջրերում անգլիական ուժեղ նավատորմի հայտնվելը ծայրաստիճան ճնշող ազդեցություն թողեցին սուլթանի հոգեկան վիճակի վրա: Դրությունը տագնապալի էր դառնում նաև նրանով, որ այդ «կայսրության բախտը կենտրոնացված էր մի այնպիսի մարդու ձեռքում, որն ընդունակ էր ենթարկվելու ամենակործանարար ու վտանգավոր ազդեցություններին և գործել բարոյական ճնշման տակ...»: Ժամանակակիցները նշում են, որ սուլթանի ֆիզիկական վիճակը կարող էր նրան ամեն րոպե դուրս բերել հավասարակշռությունից և արկածախնդրության մղել: Դա հայտնի էր նաև լայն շրջաններին և, հակառակ դրան, ժողովրդական շարժումները չէին դադարում ու ստանում էին նոր թափ: Դանակը ոսկորին էր հասել:

Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանության 1890 թ. սեպտեմբերի մի հաղորդագրությունից երևում է, որ հայկական շարժումները գնալով մեծ չափերի են հաս-

հում: Սուլթանը, վրա հասնող վտանգից խուսափելու համար, հայ զանգվածների բո. զոքները բավարարելու կեղծ խոստումներ էր տալիս, բայց դրանք այլևս չէին կարող կասեցնել տեղի ունեցող խմորումները, նրանց վտանգավոր ընթացքը: Մի այլ հաղորդագրության մեջ ասվում է. «Երևանի մոտ ամբոխ է կուտակվում, որը մտադիր է սահմանն անցնել և օգնել հայկական շարժմանը: Սուլթանը խնդրում է Ռուսաստանին առաջվա պես արգելակել Փոքր Ասիայում խաղաղությունը ապահովելու գործին սպառնացող այդ շարժումը»: Թուրքիայի արտաքին գործերի նախարարի փոխանորդ Հարություն-փաշա Դադյանը սուլթանի և հայ զանգվածների միջև միջնորդի դեր ստանձնելով, այն կարծիքն է հայտնել, թե «Արքունիքն ու Բ. Դուռը անգործության են մատնված և որ ազգակիցները ծայրահեղ գրգռված են ու գործին խաղաղ ելք տալը դարձել է անհնարին»:

Ռուսական շրջաններում հայտնի է դառնում նաև այն, որ հայերի դահիճ, Մուսա բեյի հանկարծակի անհետանալը գաղտնի է պահվում, թեև պալատական շրջանները անտեղյակ չեն: Մի ուրիշ հեռագրից պարզվում է, որ «Մուսաբեյն անցել է ռուսական սահմանը և խնդրվում է նրան իր ընկերներով ձերբակալել, քանի որ նրանք ընդունակ են ավելի ևս բորբոքել դժգոհությունները Հայաստանում»:

Բազմաթիվ փաստաթղթեր վկայում են, որ Արևմտյան Հայաստանի շատ վայրերում՝ սկսած 1890 թ. գործում էին «Հնչակ» և այլ գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ:

1890 թվականից սկսած Էրզրումում, Վանում, Բիթլիսում և այլ վիլայեթներում գինված ելույթները չէին դադարում: Դրանց Թուրքիան հակադրում էր հայկական ջարդերը, որոնք անգամ 1892 թ. շարունակվում էին Ադանայում, հաջորդ տարում՝ Կեսարիայում և Փոքր Ասիայի այլ վայրերում: Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Տոմպսոնը ստիպված էր 1893 թ. մարտի 13-ի իր հաղորդագրության մեջ արձանագրել, որ «հայերի և, առհասարակ, քրիստոնյաների վիճակը Կեսարիայում և Փոքր Ասիայի այլ վայրերում ծայրահեղ կրիտիկական է»:

Կեսարիայում հենց արարողության ժամանակ մահմեդականները թալանել էին հայկական երեք եկեղեցի, հափշտակել նույնիսկ աղոթող կանանց ապարանջաններն ու մատանիները: Հայերին օրը ցերեկով կողոպտում էին նաև փողոցում: Փոխանակ վերջ տալու այդ կամայականությունները, թուրքական իշխանությունները ավելի քան 500 հայերի ձերբակալել և բանտ էին նետել: Անհապաղ ձերբակալվում ու բանտ էին նետվում հատկապես մտավորականները:

Կովկասի կառավարիչը 1893 թ. օգոստոսի 20-ի գրությամբ ցարական Ռուսաստանի ներքին գործերի մինիստրին հայտնում էր, որ 45 թուրքահպատակ հայ ընտանիքներ իրենց բնակավայրերից բռնի կերպով քշվել են Երևանի նահանգ և Կարսի մարզ: Հայտնվում էր նաև, որ սպասվում է հայերի նոր հոսանք դեպի սահմանակից ռուսահպատակ շրջանները:

Շատ հայեր էին գաղթում հատկապես Էրզրումից, Բասենից և Ալաշկերտից: Վերջին երկու շրջաններից 1892 թ. Ռուսաստան էր գաղթել 400 ընտանիք՝ ավելի քան 2000 մարդ, չհաշված այն բազմաթիվ հայ պանդուխտներին, որոնք Ռուսաստան էին գալիս ապրուստի միջոցներ որոնելու, կամ էլ իբրև ուխտավոր այցելում Էջմիածին՝ այլևս ետ չվերադառնալու նպատակով: Թուրքիայի տարբեր շրջաններից ևս շատերը ցանկանում էին տեղափոխվել Ռուսաստան՝ հակառակ այն արգելքներին, որ ստեղծում էր կառավարությունը, ինչպես և ճանապարհին կողոպտվելու մշտական վտանգին: Օրինակ, Խնուսի շրջանի Կարա-Զոբան գյուղի ամբողջ բնակչությունը ցանկանում էր տեղափոխվել և թույլտվության էր սպասում, բայց կառավարությունը մերժեց նրանց խնդրանքը:

Հալածանքներին ու ճնշումներին ավելացավ նաև 1892—1893 թթ. անբերրիությունը: Գյուղացիությունն ընկավ ծայրահեղ աղքատության ու կարիքի մեջ: Շատերն իրենց հողը, տունը և գույքը թողնում էին պարտքատիրոջ, մի կերպ ազատում իրենց օձիքը և ընդմիշտ հեռանում հայրենի վայրերից:

Քրիստոնյաների վիճակը հատկապես ծանր էր Խնուսում, Էրզրումում, Բուլանուխում, Մուշում, որտեղ կառավարությունը հայերի ամբողջ հացահատիկը բռնագրավել

էր։ Քաղաքի հիվանդությունները մեծ զոհեր էին իլում։ Պակասը լրացնում էր անասունների անեումը։ Գյուղացիությունը կանգնել էր կատարյալ քայքայման առջև։

Հայկական շարժումներն ավելի լայն ծավալ ստացան 1894 թ.։ Նրանց կենտրոնը դարձավ հերոսական Սասունը։ Նույն թվականի օգոստոսի 20-ին Էրզրումի ռուսական հյուպատոսը Կոստանդնուպոլիս՝ Նելիդովին էր հաղորդում, որ սասունցիները պաշտպանության նպատակով թողել են իրենց գյուղերը և բարձրացել լեռները, որոնք ավելի անմատչելի են ու ժայռոտ, քան Զեյթունը։

Թուրքերը կանխազգալով, որ բաց մարտում չեն կարող հաջողության հասնել, Սասունի շրջակայքում մեծ քանակությամբ զորքեր էին կենտրոնացնում՝ նպատակ ունենալով շրջափակել հայերին և սովի մատնելով, ստիպել նրանց հանձնվելու։ Սասունցիների ցանքերն ու ունեցվածքը հրդեհվում էին, անասունները բռնագրավվում։ Ծենիկ, Սեմալ, Ծուշանլիր, Ալիեն և Կելիեկուզան գյուղերը հիմնահատակ ավերվեցին, հրո ճարակ եղան։ Չնայած այդ բոլորին, սասունցիները շարունակում էին հերոսական պայքարը։ Նրանց հետ միանալով, թուրքերի դեմ զինված պայքար էին մղում նաև քրդական առանձին ցեղախմբեր։

Հայ և քուրդ աշխատավորության համատեղ հանդես գալը թուրք հարստահարիչների դեմ մղվող ազատագրական պայքարի կարևոր առանձնահատկություններից էր։ «Նման դաշնագրության տարածումը,— գրում է Էրզրումի ռուսական հյուպատոս Մաքսիմովը,— Թուրքական կառավարությանը հիրավի խիստ երկյուղ էր պատճառում»։ Ահա ինչու նա վճռական միջոցների էր դիմում քրդերին և մյուս ազգություններին հայերի դեմ դուրս բերելու, ազգային կրքերը միշտ սրելու համար։ Սասունի հերոսական ապստամբությունը ճնշելու գործում թուրքական իշխանությունները դիմեցին ամենավայրագ միջոցների։ Թուրքերն անգամ երկյուղածությամբ իրար ասում էին, «որ աստված Սասունում իրենց թափած անմեղ արյունը չի ների և մուսուլմաններին կպատժի դրա համար»։

Բիթլիսի վալի Թահսին-փաշան, կատարված վայրագությունների պատասխանատվությունից խուսափելու նպատակով, զեկուցագիր ներկայացրեց Մեծ Դռանը՝ հայերին մեղադրելով քաղաքական ապստամբության մեջ։ Իսկ կառավարությունը համաշխարհային հասարակության վրդովմունքի ճնշման տակ գործը հանձնեց ռազմական իշխանություններին՝ իբր թե հետաքննելու։ Դրա քողարկված նպատակը հասարակության մոլորեցնելն էր. ամեն ինչ սուլթանի հրահանգի համաձայն էր կատարվել։

Թուրքական իշխանությունները ճիգ ու ջանք չէին խնայում, որպեսզի թաքցնեն այն ամենը, ինչ կատարվել էր իրենց կամքով։ Պաշտոնական ու ոչ-պաշտոնական որևէ հաղորդագրություն հրապարակ չեկավ ոչ Սասունի և ոչ էլ մյուս շրջաններում տեղի ունեցած դեպքերի մասին։ Նույնիսկ օտարերկրյա դիվանագետները, որոնք սովորաբար լավատեղյակ էին Թուրքիայում կատարվող իրադարձություններին, հստակ պատկերացում չունեին։

Էրզրումում ռուսական հյուպատոս Մաքսիմովը, օրինակ, 1894 թ. հոկտեմբերի 1-ի գրության մեջ նշում է, որ դեռևս լրիվ տեղեկություններ չկան Սասունի զոհերի քանակի մասին, սակայն պարզ է, որ բնակչության մեծ մասը, «չնայած բոլորի, նույնիսկ կանանց անձնազոհ հերոսության, զոհվել է անհավասար մարտերում»։

Ամսվա վերջին օրերին միայն նա կարողանում է հավաստի լուրեր ստանալ և հաղորդել Կոստանդնուպոլիս, որ թուրքերը Սասունում կոտորել են մեծ թվով խաղաղ հայ բնակիչներ, որ իր վայրագությամբ ու դաժանությամբ հատկապես աչքի է ընկել Օսման փաշան։ Թուրքերը 25 օրվա ընթացքում ոչնչացրել են 30 հայկական գյուղ. այդ թվում՝ Տալվորիկը (400 տուն), Կելիեկուզանը (360 տուն), Սեմալը (85 տուն), Ծենիկը (106 տուն), Ալիեն (165 տուն), Իշխանաձորը (78 տուն) և այլն։

Հակառակ թուրքական իշխանությունների բոլոր ճիգերին, այնուամենայնիվ հայերի կոտորածի մասին լուրերը թափանցում էին եվրոպական մամուլի էջերը և օտարերկրյա դեսպանատները։ Այդ է վկայում Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանության խորհրդական Ժադովսկու 1894 թ. նոյեմբերի 10-ի հաղորդագրությունը, որտեղ նա մատնանշում է, որ հայերի նկատմամբ թուրքերի գործադրած վայրագությունը դատապարտվում է եվրոպական մամուլում։ Սուլթանի ջանքերը՝ կեղծել փաստերը և հերքել դրանք, ոչ մի արդյունք չեն տալիս։

Թուրքերի սանձազերծած ցեղասպանության մերկացումը դարձավ աշխարհի առաջադեմ մարդկանց բարոյական պարտքը: Նույնիսկ այն երկրներում, որտեղ քաղաքական նկատառումներով մինչև այդ ցանկանում էին աչք փակել թուրքական բարբարոսությունների առջև, առաջադիմական շատ գործիչներ դատապարտեցին հայերի մասսայական կոտորածը: Սուլթանը պաշտպանվելու այլ միջոց չգտավ, քան արգելել արտասահմանյան թերթերի առաքումը Թուրքիա:

Սուլթանը կարող էր փականք դնել թուրքական մամուլի, առավել ևս հայկական թերթերի ու ամսագրերի վրա: Եվ նա անում էր այդ՝ իր գրաքննության միջոցով արգելելով մինչև անգամ «ապստամբություն», «Հայաստան», «ազատություն», «դեմոկրատիա», «լիբերալ» բառերը, Լադոնթենի առակները, «Հումլետի» բեմադրությունը, ջրի ֆորմուլան (H_2O), որ կարող էր հիշեցնել Համիդ 2-րդի ոչնչությունը: Սուլթանին հանական երկյուղը ստիպում էր արգելել արդյունաբերական նպատակներով պայթուցիկ նյութ ներմուծել, մինչև անգամ թույլ չտալ պալատում ջրատար խողովակներ անցկացնել: Այդ բոլորը նրա իրավունքների սահմաններում էին:

Իսկ արտասահմանյան մամուլը սուլթանից կախում չուներ, թեև այդ նույն արգելքի ուժով նա չէր կարող ստանալ և այդպես էլ չստացավ այն ճշմարտացի տեղեկությունները, որ այսօր հնարավորություն տային ամբողջական գաղափար կազմել տեղի ունեցած արյունոտ իրադարձությունների մասին: Դրա փոխարեն՝ այդ մամուլն առատ նյութ է տալիս այն ցասման մասին, որ հայկական կոտորածների առթիվ համակել էր ականավոր շատ և շատ գործիչների:

Թուրքական բարբարոսությունների դեմ ցասման իր ձայնը բարձրացրեց նաև համայն հայությունը: Վիրո-իմերեթյան հայկական թեմի առաջնորդ Գևորգ Սուրենյանը 1894 թ. նոյեմբերի 24-ի դիմումով խնդրում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Գիրսին, օգնել հայ ժողովրդին՝ ազատագրվելու թուրքական յաթաղանից, քանի որ «հայերի Ռուսաստանին նվիրված լինելը, որը դրսևորվել է Թուրքիայի դեմ նրա մղած բոլոր պատերազմների ժամանակ, գլխավոր պատճառներից մեկն է, որի համար Թուրքիան նրանց և՛ ատում, և՛ հետապնդում է»:

Բազմաթիվ հայ գործիչներ դիմում էին ռուս կայսերն ու մյուս տերություններին՝ պահանջելով սանձահարել վայրագ սուլթանի գազանությունները: Բայց այդ տերություններից ոչ մեկը դիվանագիտական խաղերից և հայ ժողովրդին «ցավակցելուց» այն կողմ չանցավ: Նրանք բոլորը փաստորեն անտարբեր մնացին հայկական հորդառատ արցունքի, հայերի անմեղ թափված արյան հանդեպ: Վ. Մաքսիմովը 1894 թ. նոյեմբերի 26-ի հաղորդագրության մեջ նկարագրում է Սասունում տեղի ունեցած ահավոր ողբերգությունը: Թուրք զինվորները «սպանում էին երեխաներին, որպեսզի հագեցնեին իրենց անասնական կրքերը, անխնա ոչնչացնում էին աղջիկներին ու կանանց», ապա գյուղերն հիմնահատակ կործանելուց հետո հսկայական թվով թանկարժեք իրեր և անասունների ամբողջ հոտեր էին տանում իրենց հետ: Ավարն այնքան առատ էր, որ ջարդերից մեկ շաբաթ հետո էլ Մուշ քաղաքում ոչխարը վաճառում էին 5 պիաստրով (42 կ.), մեկ եզը՝ 20 պիաստրով (1 ռ. 68 կ.), յուղի փութը՝ 10 պիաստրով (84 կ.) և այլն:

Փաստաթղթերից մեկում Սասունում ծագած մեծ կոտորածի շարժառիթների առնչությամբ նշվում է, որ 1892 թ. ոմն հոմեադավան Տամադյան, այցելելով Սասուն և Մուշ, քարոզում է հայերին կաթոլիկություն ընդունել: Ոստիկանությունը, սակայն հատուկ միտումներով ցանկանում է նրան մեղադրել քաղաքական ագիտացիա ծավալելու համար: 1893 թ. մայիսին Տամադյանը ձերբակալվում և բերվում է Բիթլիս, իսկ այստեղից տեղափոխվում Կոստանդնուպոլիս: Ո՞վ գիտե, թե ինչ պատիժ կստանար, եթե կաթոլիկ տերերի միջամտությամբ Տամադյանը ազատ չարձակվեր: «Քաղաքական ագիտատորը» պարզապես ոչ մի կապ չուներ հայ ազատագրական շարժման հետ: Բայց այդ չնչին առիթն էլ բավական էր, որպեսզի թուրքերը, որ մինչ այդ էլ դժգոհ էին Սասունի ազատատենչ ձգտումներից, գործադրեին հնարավոր ու անհնար ամեն միջոց Սասունն ավերելու համար:

Թուրքական կառավարության հրահանգով Բիթլիսից դեպի Սասուն շարժվեց մի ստվար բանակ, որը մինչև ատամները զինված լինելուց բացի, իր հետ տանում էր 80 բաք նավթ՝ գյուղերը հրդեհելու, և 4 լեռնային հրանոթ՝ պատսպարվածներին արկակոծելու համար: Թուրք զորապետերը չշտապեցին Սասուն մտնել: Նրանք

սկզբում փորձեցին քրդերին հրահրել հայերի դեմ, խոստանալով ավարն ամբողջովին նրանց տալ: Դա հրապուրեց ոմանց, և նրանք հարձակման անցան: Հայերը կարծելով, որ միայն քրդերի հետ գործ ունեն, համարձակ ետ մղեցին նրանց, բոլորովին չսպասելով կանոնավոր զորքի հարձակմանը: Քրդերը հրաժարվեցին առանց թուրքական զորամասի աջակցության վերսկսել հարձակումը. նրանք արդեն կորցրել էին 100 մարդ: Առաջին ընդհարումից հետո սասունցիներից զոհվել էր 6-ը: Այս անգամ թուրք զինվորների մի մասը քրդական տարազ հագած հարձակման անցավ: Գրոնը սկզբում որոշ հաջողություն բերեց:

Դրանից հետո հայկական մի շարք գյուղերում թուրքական զորամասեր երևացին: Նրանք ամենուր հայտարարում էին, թե եկել են հայերին օգնելու քրդերի դեմ մղվող կռվում, նպատակ ունեն խաղաղություն հաստատելու: Այդ նույն զորքերն օթևանեցին գյուղում և, օգտվելով հյուրընկալվողների միամտությունից, կես գիշերին սրի քաշեցին ամբողջ բնակչությանը: Գեներալ Ֆերիկ փաշան հրապարակեց սուլթանի ֆերմանը՝ հայկական գյուղերը ոչնչացնելու և հայերին կոտորելու մասին: Նաև կոչ արեց զինվորներին կատարել իրենց պարտքը: «Ասում են, որ սկզբում զինվորները չոգևորվելով այդ հրամանով, հրաժարվեցին, սակայն հրամանատարները նրանց ահաբեկելով, ստիպեցին սրի քաշել հայերին: Կոտորածը կատարվում էր անխնայորեն՝ խտրականություն չդնելով ո՛չ հասակի և ո՛չ սեռի միջև»:

Զարդը հատկապես մեծ չափերի հասավ օգոստոսի վերջերին՝ սուլթանի գահակալության տարեդարձի օրերին: Արյունարբու սուլթանը իր գահի բարձրանալու օրը որոշել էր նշել հազարավոր անմեղ հայերի արյունով, նրանց շեն ավանների ավազակաբար ոչնչացումով:

Որոշ գյուղերում քահանաները և աչքի ընկնող մարդիկ, պարտավորագրեր կազմած, ընդառաջ են գնում թուրք հրամանատարին, աղերսանքով ներում խնդրում, պարտավորվում կատարել բոլոր կարգադրությունները: Սակայն բոլորին, ասանց բացառության, տեղնուտեղը գնդակահարում էին:

Բայց այդ ամենը դեռ սկիզբն էր: Ծրագրված էր հայկական ջարդեր սկսել նաև մի շարք ուրիշ շրջաններում: Մասնավորապես նախատեսվում էր ոչնչացնել Մշո հարթավայրում գտնվող Վարդենիս գյուղը, որը վատ համբավ ուներ կառավարական շրջաններում, դեռ այն օրերից, երբ տեղի էր ունեցել բանդիտ Մուսա-բեյի դատավարությունը, և որի ասթիվ գյուղի մի քանի ներկայացուցիչներ գնացել են Կոստանդնուպոլիս՝ մեղադրական ցուցմունք տալու:

Որքան էլ գազանացել էր Թուրքական խուժանը, այսուամենայնիվ չէր կարող հաշվի չառնել հասարակական կարծիքի հետ, ասավել ևս, որ օր-օրի ավելի հուժկու էր հնչում անարգանքի սյունին գամող նրա ձայնը: Հիրավի, միջազգային հասարակայնության բողոքն իր դերը կատարեց: Երզնկայից Սասուն ժամանեց թուրքական զորքերի գլխավոր հրամանատարը և դադարեցրեց կոտորածն ու ավերումը: Բայց միայն սպանվածների թիվն արդեն հաշվվում էր 20—25 հազար:

Սասունի ելեռնի գլխավոր կազմակերպիչ ու ոգեշնչող Բիթլիսի վալին իր հանցանքը ծածկելու համար, ջարդերից հետո, փորձեց քաղաքացիների ստորագրություններով համախոսական կազմակերպել, ըստ որի իրեն շնորհակալություն էր հայտնվում Սասունում իբրև թե իր կատարած դրական աշխատանքի համար: Բայց բնակիչները հրաժարվեցին այդպիսի փաստաթուղթը ստորագրել: Հակառակ դրան, վալուն հաջողվեց մի շարք գյուղերի ահաբեկված տանուտերերի ստորագրությամբ ասպարեզ հանել նման մի համախոսական և նույնիսկ հրապարակել մամուլում:

Սասունում, ինչպես և մյուս հայաշատ վայրերում տեղի ունեցած կոտորածները հնարավոր դարձան այն բանի հետևանքով, որ եվրոպական քաղաքակիրթ պետություններն աչք փակեցին 19-րդ դարավերջին տեղի ունեցող այդ բարբարոսության առջև, չցանկացան ու չփորձեցին բռնել արյունոտ սուլթանի ոճրագործ ձեռքը, լռելյայն խրախուսեցին ցեղասպաններին:

Այս ահավոր դեպքերը նկարագրող ամերիկական քաղաքացիների մեզ հասած նամակներից մեկում նշվում է, որ Սասունի կոտորածը գոյություն ունեցող կառավարման հատուկ սիստեմի հետևանքն էր: Վերջին տասնամյակի ընթացքում, գրում է նամակի հեղինակը, ամբողջ երկրում եղել են հարյուրավոր սասուններ (կոտորածներ —Ծ. Ա.): Եվրոպայի ներողամությունը նպաստավոր պայմաններ է ստեղծել, որ-

պեսզի այդ սիստեմը գործի դաժանորեն և իր ամբողջ ուժով: Այն հետևանքն է կրոնական ու ռասսայական անհանդուրժողականության և հանգում է քրիստոնյաների բնաջնջմանն ու վերացմանը»:

Եվ իրոք, ինչպես ժողովուրդներին վիճակված ամեն մի ողբերգություն. այնպես էլ Սասունի կոտորածի հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստներն ու տառապանքները չի կարելի չափել այն անմիջական զոհերով, որոնք խլեցին թուրք մարդակերները: Այո՛, տասնյակ հազարներն ընկան, ջնջվեցին ամբողջ գյուղեր ու շրջաններ: Իսկ ինչ էր վիճակված այն հատ ու կենտ գյուղերին, տասնյակ անդամներ ունեցող այն ընտանիքների հատ ու կենտ ներկայացուցիչներին, երբեմն օրորոցի մեջ մնացած այն մանուկներին, որոնք, պատահաբար փրկվելով, դեռ պետք է շարունակեին տառապել մղձավանջի մեջ և ամբողջ կյանքում ողբալ կորցրած հարազատներին, որոնել համբամիջում մնացած իրենց երեխաներին: Կբուժվեի՞ն երբևիցե այդ վերքերը: Բնա՛վ: Իսկ քանի՞-քանի՞ տաղանդավոր անհատներ՝ դուրյաններ ու կոմիտասներ կուլ գնացին, ինչե՞ր կստեղծեին ու կկերտեին նրանք, ի՞նչ ծառայություններ կմատուցեին մարդկությանը, այդ թվում նաև հենց Թուրքիային...

Կոտորածից փրկված 24-ամյա Հակոբ Տեր-Առաքելյանի պատմածներից պարզվում է, որ նրանց 23 հոգուց բաղկացած ընտանիքից ողջ են մնացել միայն 9-ը: Տերերը, չկարողանալով թողնել պապենական տունը, ոչնչացվեցին, իսկ երիտասարդները քաշվեցին Անդոկ սարը, փորձեցին պաշտպանվել: Թնդանոթների արկերից նրանց ապաստանած անտառը բռնկեց, և նրանք կրակի բոցերում այրվեցին: Պաշտպանվողների մյուս մասը 25 օր դիմադրելուց հետո, քաղցից հյուծված վիճակում, ընկավ թուրքերի ձեռքը: Խոստացել էին հանձնվելու դեպքում խնայել, սակայն ինչպես միշտ, այս անգամ ևս դրժեցին իրենց խոստումը: Թուրք զինվորները Կելիեկուզան գյուղի մոտ նախօրոք պատրաստված փոսերի եզրին շարելով, սրի հարվածով, նրանց մեկ առ մեկ ցած էին գլորում: Երբ փոսը լցվեց, դիակները ծածկեցին հողով: Հակոբը նաև պատմում է, թե որպիսի սարսափելի տանջանքների էին ենթարկվում Թուրքերի ձեռքն ընկածները: Սեմալ գյուղի քահանա Հովհաննեսը, որը Անդոկի պաշտպանների շարքերում էր, իր հետ գտնվող 500 հոգուն համոզեց գերի հանձնվել՝ հավատալով թուրքերի խոսքերին: Նա էլ հենց առաջինը պատժվեց. հանեցին նրա աչքերը, ապա սրախողխող արեցին: Անդոկի պաշտպաններին գլխավորում էր Շենիկ գյուղի ռես Գրկոն, որը հրաժարվեց հանձնվել թուրքերին, չհավատաց նրանց երդմանը: Բոլորից միայն նա փրկվեց և մեկ էլ Հակոբը, որը սրի հարվածից ընկել էր, և թուրքերը, կարծելով թե նա մեռած է արդեն, թողել հեռացել էին:

Խարտկա գյուղացի Կիրակոսը պատմում էր, որ 28 հոգուց բաղկացած իրենց ընտանիքը ամբողջովին զոհ է դարձել թուրքական յաթաղանին, իսկ ինքը, որ մի ժամանակ բավականին ունևոր տնտեսություն է ունեցել, այժմ, կոտորածից հետո, ողորմություն հավաքելով է պահպանում գոյությունը:

Շենիկ գյուղի ռես Գրկոյի 50 հոգուց բաղկացած ընտանիքից փրկվել է միայն 10-ը: Նրա եղբայր Խեչոյի ցուցումից երևում է, որ թուրքական զորքերի հրահանգով բրդերը նախ հարձակվել են Սեմալ և Շենիկ գյուղերի հովիվների վրա, քշել տարել են նրանց հոտը: Դրա հետևանքով ընդհարում է սկսվել: Բրդերից ոմանք հայտնել են հայերին, որ այդ բոլորը կատարվում է թուրք զինվորականների հրահանգով, որպեսզի նրանք միջամտելու առիթ ունենան և հայերին ոչնչացնեն: Սակայն հայերը չէին հավատում, որ կառավարական զորքերը կարող են դիմել նման նենգ միջոցների:

Պատմում են նաև, որ 30 հայ կանայք, Շաքե անունով մի երիտասարդ հայուհու գլխավորությամբ, չցանկանալով թուրքերի ձեռն ընկնել և անարգանքի ենթարկվել, դիմել են դեպի բարձր ժայռը, որպեսզի այնտեղից նետվեն անդունդը և վերջ տան իրենց կանքին: Բայց ճանապարհին նրանք ընկան թուրքական զինվորների ձեռքը, առևանգվեցին ու ոչնչացվեցին:

Թուրք լոնակալների այդ բոլոր չարագործությունները հայ ժողովրդի ազատագրական շարժումների հերոսներին պայքարի նոր և ավելի վճռական մարտահրավեր էին նետում:

Ահա այս իրադրության մեջ էր, որ Սնդրանիկը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը ոգեշնչող մյուս հայրենասերները գեհենի ճամփին կանգնած ժողովրդին

տոնելու միջոցներ էին որոնում: Ստեղծված վիճակից դուրս գալու ելքը Անդրանիկը տեսնում էր հայ ժողովրդի ուժերը միավորելու և դրսից նրան օգնություն կազմակերպելու մեջ: Դրա համար էլ նա այցելում է մի շարք հայ գաղթավայրեր և լայն աշխատանք ծավալում, ծանոթանում բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի եղանակներին ու խնդիրներին:

Անդրանիկի հուշերից դատելով՝ նա Պոլսում և Ռումինիայում մնացել է 5 տարի, ապա երկու անգամ, մինչև 1892—1893 թթ., այցելել հայրենի երկիր, ծանոթացել նրա իրավիճակին, մասնակցել հայրենիքի ազատագրման գործին զինվորագրված կտրիճների խորհրդակցություններին, քննարկել նրանց պլանները: Պոլսում, Ռումինիայում, Կովկասում գտնվելու տարիներին նաև աշխատում էր զենքով և զինվորական գործիչներ պատրաստելով օգնել արևմտահայությանը: Հետագայում Անդրանիկը նույն նպատակով, մի խումբ ընկերներով, շրջեց Տարոնում, Սասունում, Վանում և մի շարք այլ շրջաններում:

Անդրանիկի երիտասարդական տարիների տպավորությունների գրառումները շատ ուշագրավ տեղեկություններ են տալիս թե՛ իր կյանքի առանձին դրվագները լուսաբանելու, և թե հայ ժողովրդի վիճակն ու սոցիալ-տնտեսական հարաբերությունները ուսումնասիրելու տեսակետից: Երևում է, որ նա ընկերների հետ հաճախ է ուղևորություններ կատարել երկրի տարբեր կողմերում, մոտիկից ծանոթացել հայ ժողովրդի վիճակին և երկրի ընդհանուր կացությանը: Այդ բոլորը նա կատարում էր ելնելով ազատագրական պայքարի, նրա ստրատեգիական և տակտիկական հարցերը ճիշտ լուծելու խնդիրներից:

XIX դ. 90-ական թվականներից Անդրանիկը դարձավ թուրք բռնակալական լծի դեմ ծավալվող պայքարի ոգին և ազատագրական կռիվների առաջամարտիկն ու ականավոր գործիչը: Հանդգնությամբ հասնող իր խիզախությամբ նա ամենուր, սարսափ էր տարածում թուրք փաշաների ու ոստիկանների շրջանում, իսկ երբեմն սոսկ իր անունով զսպում նրանց վայրագությունները:

Անդրանիկը ազգային-ազատագրական պայքարի բոցերի մեջ նետվեց որպես մի ճվիրված շարքային երիտասարդ մարտիկ, որպես շապին-գարահիսարցի մի հասարակ հյուսն, բայց Սասունը թողեց որպես հասուն հրամանատար՝ համաժողովրդական հերոս ու առաջնորդ: Նրա մեջ, ավելի քան որևէ մեկի մեջ իր ժամանակակիցներից, առավել խտացված ու ցայտուն կերպով դրսևորվեց մեր ժողովրդի դարերով կուտակված ազատաբաղձ ոգին: Նա հայ ժողովրդի ազատագրական պայքարի հավաքական ուժի հայտարարն էր:

ИЗ ИСТОРИИ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ АРМЯНСКОГО НАРОДА

Ц. П. АГАЯН

Академик АН Арм. ССР

Резюме

Настоящая статья освещает краткую историю освободительной борьбы армянского народа против турецкой тирании в конце XIX-го столетия.

В период господства султана Абдул Гамида Турция вела политику истребления армянского народа, препятствовала проведению реформ в армянских вилайетах.

Двуличная и коварная политика великих держав еще более ухудшила положение армянского народа. Но героические сыны Армении вели упорную освободительную борьбу, обогатив славную историю своего народа. В статье приводится много новых фактических данных, освещающих эти вопросы.